հարստութեանց և զամենայն պատուական իրաց ձերոց որ այժմոյս դուք ոչ ունիք և 'ի վաղընջոց 'ի մէնջ իբր կորուսեալ, ահա բանալիքն դռան երկրորդապէս դրախտին ձերոյ Արարատեան յօրէնս և կարգս, և կանօնս ձեր զի ծանուցէք ձեզ զոր ինչ գործ բարի և չար և զոր ինչ հարկաւոր գործելոյ և հրաժարելոյ, առաջանալոյ առ 'ի գործ, և սովաւ հաստատեսցի սիրտ ձեր 'ի հաւատս որում ունիք պինդ պահելոյ Օրէնս ձեր, և այս Օրինօք Շահեսցիք դուք ոչ միայն ապահովութիւն անձանց և ստացուածոց ձերոց, նա ևս մնասցէ ժամանակս կենաց ձերոց 'ի ձեռին ձեր ազատ, որում կարի ծախելով նոյն ժամանակին ուսանիք արհեստ իմաստութիւն և հանճար, որ տացէ երջանկութիւն ազգին ձերոյ և Օգնութիւն իշխանաց ձերոց առատասցի պտուղն հասից, մաքսից, հարկից այլն, զի մի գուցէ հանդիպեսցի ձեզ հարկապահանջութիւն որպէս այժմոյս, և սովաւ կացցիք և մնացիք ազատ ամենեքեան 'ի գործս ձեր և բառցցի երկիւղ 'ի սրտէ ձերմէ 'ի վնասուց արանց չարեաց, և ամենայն ոք ազատապէս կարող լինիցի խորհիլ, խօսիլ և հաւատալ զի զամենայն զոր ինչ իւր ստացուածք հաւաստի իւր է, և ոչ ոք կարիցէ մերձենալ նմայ և մազ մի գլխոց ձերմէ մի պակասեսցի, և ոչ ոք կարող լինիցի ձգել ձեռս իւր ընդ մին հաւկիթն ձեր, և ամենեքեան մնասցուք տէր ստացուածոց